

ՊՈՐՏԱՐՈՒՅԾ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԸ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ
ԱՐԳԵԼՔԻ ՕՐՅԵԿՏ

ՀՐԱՆՏ ՀԱՆՎԵՐԴՅԱՆ

Սովետական քրեական իրավագիտության մեջ մեծ տեղ է հատկացվում պորտաբուծության դրսևորումների իրավական բնութագրմանը¹: Որպես կանոն, այդ հարցը քննող աշխատությունները նվիրված են կա՛մ տվյալ ժամանակաշրջանում գործող օրենսդրությանը, կա՛մ պորտաբուծ կյանք վարելու հանցակազմին: Ըստ էության գրանցում բացակայում է այս հանցակազմի ընդհանուր տեսակային բնութագիրը: Նման վիճակը բավարար համարել չի կարելի, քանի որ պորտաբուծության հետ կապված հանցագործությունների ընդհանուր գծերի նկատմամբ անուշադրությունն իջեցնում է այդ երևույթների դեմ քրեաիրավական պայքարի մակարդակը և հնարավորություն չի տալիս լրիվ չափով վեր հանել նրանց փոխկապվածությունն ու յուրահատկությունները: Պորտաբուծությունը որպես վարքագիծ քննելիս նախ պետք է ընդգծվեն միայն այն առանձնահատկությունները, որոնք հաշվի են առնվում պորտաբուծության դեմ քրեաիրավական պայքարի կոնկրետ հարցեր լուծելիս:

Յուրաքանչյուր առանձին հանցագործություն, ինչպես և ամեն մի հակահասարակական արարք, որը նույնիսկ քրեորեն պատժելի պորտաբուծություն չէ, կազմված է տարբեր վարքագծային ակտերի համակցությունից²: Այդ համակցությունները ըստ բարդության կարող են տարբեր լինել: Առանձին հանցագործությունը, օրինակ սպանությունը, կարող է կազմված լինել մեկ գործողությունից և մեկ հետևանքից: Այլ պարագաներում իր փաստական կազմով այն կարող է լինել շատ ավելի բարդ. ընդ որում, առանձին հանցագործությունների իրավական կառուցվածքը չափազանց բազմազան է³: Այդ իսկ պատճառով առանձնացվում են բարդ հանցագործությունները՝ հիմնական, ընթացող, շարունակվող և այլն⁴: Միանգամայն հասկանալի է՝ որքան բարդ է անթույլատրելի վարքագիծը, այնքան դժվար է նրա դեմ ուղղված քրեաիրավական արգելքի ձևակերպման խնդիրը:

¹ «Курс советского уголовного права», т. 6, раздел 4; «Преступления против общественного порядка и общественной безопасности», Киев, 1974. Кандидатские диссертации: В. И. Бубенцов, Борьба с бродяжничеством, попрошайничеством и тушеядством, Саратов, 1973; В. Н. Самароков, Ответственность за бродяжничество по советскому уголовному праву, М., 1974.

² А. А. Пионтковский, Курс советского уголовного права, т. 2, М., 1970; А. М. Яковлев, Совокупность преступлений по советскому уголовному праву, М., 1960, стр. 85.

³ В. Н. Кудрявцев, Причинность в криминологии, М., 1968, стр. 65.

⁴ Н. Ф. Кузнецова, Значение преступных последствий для уголовной ответственности, М., 1958; А. Зелинский, Квалификация преступлений, предусмотренных одной и той же статьей Уголовного кодекса («Советская юстиция», 1974, № 4).

Պորտաբուծությունն հասկացությունն անպայմանորեն կապված է ոչ միայն մի շարք արարքների, այլև հատկապես բնույթով և նպատակներով տարբեր արարքների համակարգի, վարքագծի և պորտաբուծության ձևերի հետ: Այս պարագայում առկա են և՛ սուբյեկտի՝ իր էությունը ակտիվ տարածքային տեղափոխությունները և՛ պասսիվ վարքագիծը (հանրագուտ աշխատանքից խուսափելը և այլն): Այստեղից հետևում է, որ քրեական օրենքում պետք է անպայման նկարագրվի վարքագծային ակտերի բնույթը: Ընդ որում, ամենից առաջ պետք է հաշվի առնել քրեական օրենքի նպատակները՝ հանցավոր ոտնձգությունից ապահովել սովետական հասարակական և պետական կարգի, ամբողջ սոցիալիստական իրավակարգի պահպանությունը⁵, Ծթե նկատի ունենանք, որ պորտաբուծ կյանք վարողները կատարում են ամենատարբեր գործողություններ, ապա պարզ կդառնա, որ նշված խնդիրը բավական բարդ է:

Պորտաբուծության դեմ քրեաիրավական պայքարի առանձնահատկությունը բացատրվում է նաև այդ հակահասարակական երևույթի մեկ այլ առանձնահատկությամբ: Քրեորեն պատժելի պորտաբուծության փկայազրման համար անհրաժեշտ է տալ ինքնուրույն իրավական որակավորում: Այդ իսկ պատճառով պորտաբուծության դեմ քրեաիրավական կարգավորման հնարավորությունը որոշվում է այդ արարքների իրավական կարգավորվածությունը, նույնիսկ եթե պատասխանատվությունը դրանց դեպքում նախնական պայման չէ մեղավորին քրեական պատասխանատվության ենթարկելու համար: Դա մասնավորապես վերաբերվում է հանրագուտ և անաշխատ եկամուտներ հասկացություններին: Որոշակի դեպքերում օրենքը պարունակում է եկամուտների ձեռքբերումն արգելող միջոցներ (թղթախաղով, մոլի խաղերով վաստակած միջոցները և այլն)⁶: Այս իմաստով պորտաբուծ կյանք վարելու պատասխանատվություն սահմանող քրեաիրավական նորմերն անխուսափելիորեն պետք է ձևակերպվեն որպես անկետային: Սակայն հատկապես պորտաբուծ վարքագծի դեմ մղվող պայքարի ոլորտում դժվար է ձևակերպել մարդկանց գործողությունները և նրանց վարքագիծը կարգավորող իրավական ակտերը: Այդ խնդիրը դեռևս ամբողջությամբ լուծված չէ, որը և դժվարացնում է քրեաիրավական միջոցների կիրառումը պորտաբուծության դեմ մղվող պայքարում:

Միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ իրավագիտական գրականության մեջ արծարծված այն կարծիքը, որ միայն բարոյական նորմերի պահանջների հաշվառմամբ կարելի է ճշտորեն մեկնաբանել պորտաբուծության էությունը, իսկ մեղավորի անձնավորությունը գնահատել բարոյական նորմերի շփանիշներով⁷:

⁵ Քրեական օրենքի նպատակների մասին տե՛ս Н. Ф. Кузнецова, Проблемы изучения эффективности уголовно-правовых норм и институтов («Эффективность применения уголовного закона», М., 1973).

⁶ Ю. Антоян, Ответственность за систематическое занятие бродяжничеством («Советская юстиция», 1973, № 24, стр. 4).

⁷ И. Н. Д а и ш и н, Уголовно-правовая охрана общественного порядка, М., 1973, стр. 135.

Հետևաբար, պորտաբույժ կյանք վարելը, որպես անձի վարքագիծ, սկսվում է բարոյական նորմերի խախտումից և համապատասխանաբար պետք է դիտարկվի այդ տեսանկյունից: Ըստ որում, այստեղ անհրաժեշտ է նշված նորմերի կոնկրետացված խախտման վկայագրումը: Քրեաիրավական նորմերի հիմնավորված կիրառման համար էական դժվարություն է ստեղծում նաև պորտաբույժ վարքագծի դիմակավորման հնարավորությունը: Քանի որ պորտաբույժի դեմ քրեական սանկցիա կիրառվում է ոչ թե պատահական գործողության, այլ որոշակի վարքագծի ձևով դրսևորվող դիտավորությունների համակարգի նկատմամբ, ապա պորտաբույժ կյանք վարողը հնարավորություն ունի խաբուսիկ ձևով ընդհատել այն, քողարկել աշխատանքի ընդունվելով, դադարեցնել թափառաշրջիկությունը և այլն⁸: Դրանք կանխելու համար անհրաժեշտ է քրեական օրենքն ուժեղացնել պորտաբույժության դեմ պայքարի այլ միջոցներով: Կարելի է, օրինակ, ավելի գործուն դարձնել այն մարմինների համակարգը, որոնք իրագործում են պորտաբույժների նկատմամբ կիրառվող որոշումները: Բացի այդ, անհրաժեշտ է բացահայտել և քրեաիրավական նորմում ամրապնդել հանցակազմի այնպիսի հատկանիշներ, որոնք կապահովեն ճշմարիտ քրեադատավարական ապացուցման հնարավորությունը⁹:

Քրեական իրավունքն ի վիճակի է պայքարելու պորտաբույժության դեմ և այդ պայքարն իրականացվում է: Սակայն կոնկրետ քրեաիրավական հարցեր լուծելիս անհրաժեշտ է ելնել քրեական դատավարության լրնթացքում պորտաբույժության ապացուցման հատկանիշների սահմանման բարդությունից:

Սահմանված գործողությունները հաճախ նույնպես լինում են բավական բարդ, իսկ քողարկվելու հնարավորությունը պահպանվում է նաև այս դեպքում: Պորտաբույժության առանձնահատկությունները, որպես վտանգավոր մնացուկային վարքագիծ, ինքնըստինքյան չեն նվազում, այլ ընդհակառակը, շատ դեպքերում ուժեղացնում են նրա հասարակական վտանգավորությունը: Բայց պորտաբույժ կյանք վարելու դեմ պայքարի քրեաիրավական միջոցների ուսումնասիրման ժամանակ գլխավորը նկարագրված գործոնների հաշվառումն է: «Ներքին» գործոնների հետ անհրաժեշտ է հաշվի առնել նաև «արտաքին» կամ, ավելի ճիշտ, իրավական կարգավորման սոցիալական մեխանիզմը, քանի որ դրանցով են որոշվում պորտաբույժության դեմ պայքարի քրեաիրավական կարգավորման սահմաններն ու բովանդակությունը:

Քրեական օրենքի կիրառման համեմատությամբ իրավունքի սոցիալական գործողությունը սովետական իրավագետները հետազոտել են առավել մանրամասնորեն: Վ. Կուդրյավցևի, Ն. Կուզնեցովայի, Ա. Սախարովի, Ա. Շլյապոշնիկովի և այլոց աշխատություններում վերլուծվել են քրեական

⁸ 11. Маладин, В. Шванков, Борьба с туеядством и ее трудности («Социалистическая законность», 1974, № 3); Е. Худяков, Ответственность за уклонение от общественно-полезного труда и ведение паразитического образа жизни («Советская юстиция», 1974, № 4), И. П. Цвелодуб, А. С. Шляпочников, Совершенствование правового регулирования борьбы с туеядцами («Советское государство и право», 1970, № 2, стр. 85).

⁹ Վերջին տարիներին աճել է մասնագետների ուշադրությունը հանցակազմի ապացուցման հնարավորությունների, մասնավորապես սուբյեկտիվ կողմի նկատմամբ (Г. А. Злобин, Б. С. Никифоров, Умысел и его формы, М., 1972, стр. 224 и сл.).

օրենսդրության գործողության մեխանիզմի այնպիսի կողմեր, ինչպես քրավագիտակցության և բարոյագիտակցության ազդեցությունը քրեաիրավական նորմերի կատարման վրա, կապը օրենքի բովանդակության, նրա կիրառման պրակտիկայի և իրավագիտակցության միջև, քրեական արդարագատության համակարգի դերը, քրեական օրենքների պահանջների իրագործելիությունը պետական միջոցների որոշակի շտապման դեպքում և այլն¹⁰, Պորտաբուծության դեմ մղվող պայքարում կարևոր նշանակություն ունի նաև գործող օրենսդրության առանձնահատկությունների հաշվառումը: Ա. Շլյապոչնիկովը և Ի. Ցվելոդուբը իրենց աշխատություններում փնտրելով պորտաբուծության դեմ իրավական պայքարի կարգավորման կատարելագործման ուղիներ, իրավացիորեն որոշակի ժամանակաշրջանում գործող նորմերը պիտու էին ընդունելի: Դա խոսում է ներկայումս պորտաբուծության դեմ մղվող պայքարի որոշակի կողմերի և քննելիության անհրաժեշտության մասին՝ սկսած նրանց բացահայտման խնդիրներից: Պորտաբուծությունը բնորոշ է թաքնվածության համեմատաբար բարձր մակարդակ: Շատ կողմերով դա կապված է հատկապես տվյալ հանցագործ վարքագծի յուրահատկությունների հետ և այդ իսկ պատճառով այն պետք է հաշվի առնվի քրեաիրավական պրոբլեմների հետազոտության ժամանակ: Պորտաբուծության հասցրած վնասները բավական մեծ են, սակայն ամեն մի առանձին դեպքում դրանց հաշվառումը դժվար է: Միևնույն ժամանակ այդ վնասները հաճախ պատճառվում են վոնկրետ ֆիզիկական կամ իրավական անձանց (մուրացկանության դեպքում վնասը պատճառվում է սուբյեկտին, սակայն միայն վերջինիս համաձայնությամբ): Ուստի պետք է հաշվի առնել, որ առաջ բերելով հասարակական պարսավանք, առանձին դեպքերում պորտաբուծությունը դժվար է ընկալել և զնահատել որպես քրեական հանցագործություն, որովհետև քաղաքացիներն այն դիտում են որպես առանձին արարք և ոչ թե հանցագործություն կազմող ամբողջություն¹¹:

Պորտաբուծության բացահայտումը պահանջում է երկար ժամանակ հետևել պորտաբուծի վարքագծին և ձեռնարկված նախնական միջոցառումներին: Անհրաժեշտ է նաև համեմատաբար տեղական ժամանակամիջոց հատկացնել պորտաբուծի գործունեության փաստագրմանը: Այդ իսկ պատճառով նշված հանցագործության բացահայտման մակարդակը մեծ չափով որոշվում է ոչ միայն ներքին գործերի մարմինների հնարավորություններով, առկա կարերի քանակով, այլև գործելու, հանցագործությունը բացահայտելու համար ձեռնարկված միջոցառումների օպերատիվությամբ¹²:

¹⁰ В. Н. Кудрявцев, Социология, право и криминология («Советское государство и право», 1969, № 2, стр. 39).

¹¹ Այս հարցում դժվար են նաև իրավապաշտպան և մասնավորապես ներքին գործերի մարմինների խնդիրները, քանի որ պորտաբուծության վերաբերյալ հաղորդումները, բողոքները և զիմումները մյուս հանցագործությունների համեմատությամբ հազվադեպ են: Հանցագործության թաքնվածության հասկացության մասին տե՛ս А. С. Шляпочников, Г. И. Забрянский, Выявление латентной преступности («Советское государство и право», 1971, № 5).

¹² А. М. Ларин, В. А. Леванский, А. М. Левин, Н. В. Храмцова, Э. И. Якимович, Исследование латентной преступности («Проблемы советского государства и права», вып. 12, Иркутск, 1976, стр. 76).

Անկասկած է, որ պորտաբուծության քրեաիրավական պրոբլեմների վերլուծության ժամանակ գոյություն ունեցող բոլոր այս առանձնահատկությունները պետք է անպայման հաշվի առնվեն: Որոշակի յուրահատկություններ ունի նաև քրեորեն պատժելի պորտաբուծության քննության և դատաքննության պրակտիկան, որը նույնպես պետք է նկատի ունենալ:

Իրավագիտական գրականության մեջ այն կարծիքը կա, որ պորտաբուծության (մուրացկանություն, թափառաշրջիկություն) վերաբերյալ գործերը բնույթով պարզ են¹³: Դա արտահայտվում է նաև պրակտիկայում:

Քրեորեն պատժելի պորտաբուծության վերաբերյալ եղած քրեական գործերը և նյութերը այնքան էլ շատ չեն: Սակայն քրեական գործերի լրիվ և բազմակողմանի քննությունը և դատաքննությունը պահանջում են մեծաքանակ ապացույցներ, ավելի շատ փաստեր ու հանդամանքներ: Դա բացատրվում է պորտաբուծության հեշտ քողարկելիությամբ: Հետևաբար, քրեական օրենքը կարիք ունի ավելի հստակ ձևակերպման, որպեսզի կարողանա օժանդակել արդարադատության նպատակների ավելի լրիվ իրագործմանը: Վերջինս կարող է իրականացվել օրենքի որոշակիացման, հստակեցման և ճշգրտման ուղղով: Դրա հետ մեկտեղ քրեաիրավական նորմերի պահանջների իրականացումը և արդյունավետությունը կախված են տվյալ հանցագործության դատավարական պրակտիկայի կատարելագործումից: Այս բնագավառում շատ կարևոր է բարձրացնել քրեական դատավարության դաստիարակչական դերը: Նրա օգնությամբ ավելի հաստատակամորեն կազմակերպել հասարակության լայն զանգվածներին՝ պորտաբուծության դեմ պայքարելու համար: Բայց, թերևս, պորտաբուծության դեմ պայքարի հետազոտության և քրեաիրավական միջոցների կատարելագործման համար ամենաէական նշանակություն ունի այն որոշումների փաստական և իրավական ուժի պրոբլեմը, որ կայացնում են օրենսդրական և այլ մարմինները պորտաբուծի նկատմամբ՝ ընդհուպ մինչև նրան քրեական պատասխանատվության ենթարկելը: Ներկա դեպքում անհրաժեշտ է ընդգծել, որ քրեական օրենքի արդյունավետությունը կախված է այդ որոշումների իրագործելիությունից և ռեալությունից:

Այսպիսով, պորտաբուծության դեմ մղվող պայքարի քրեաիրավական ասպեկտների քննարկման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել պրակտիկայում առկա յուրահատկությունները: Հետևաբար, գոյություն ունեցող քրեաիրավական նորմերի փոփոխման մասին ամեն մի առաջարկ պետք է անպայման հաշվի առնի ներկա պրակտիկան, այդ նորմերի կատարելագործման, զարգացման ու փոփոխության հնարավորությունները: Դրա հետ մեկտեղ պորտաբուծության դեմ քրեաիրավական պայքարի արդյունավետությունը կախված է հասարակության և առանձին սոցիալական խմբերի իրավագիտակցության մակարդակից, այն բանից, թե ինչպես են նրանք վերաբերվում պորտաբուծությանը և դրա դեմ մղվող պայքարին:

Իրավագիտակցության և բարոյագիտակցության խնդիրն այստեղ երկակի է: Սոցիալական կախման տեսակետից քրեական օրենքի արդյունավետությունը որոշվում է հանցագործ անձի բարոյահոգեբանական հատկություն-

¹³ Р. Д. Рахунов, Дифференциация уголовно-процессуальной формы по делам о многозначительных преступлениях («Советское государство и право», 1975, № 12, стр. 64).

ներով¹⁴, Մյուս կողմից, չափազանց կարևոր է հաշվի առնել պորտաբույծների և սովետական ժողովրդի լայն զանգվածների միջև առկա կոնֆլիկտի սոցիալ-հոգեբանական աստիճանը: Պորտաբույծների բարոյական և իրավական գիտակցութունը բնորոշվում է նրանց հակահասարակական ուղղվածությամբ, հայացքներով և հանրային արժեքների նկատմամբ վերաբերմունքով: Այդ է վկայում այն փաստը, որ ըստ ՌՍՖՍՀ-ի քր. օր. 209 հոդվածի հանցագործը, որպես կանոն, կատարում է մի քանի իրավախախտում՝ չպահպանելով նաև բարոյականության նորմերը:

Այդ իսկ պատճառով էական նշանակություն ունի պատժի դաստիարակչական ուժը, որն իր հերթին մեծ մասամբ կախված է նրա ճիշտ կատարումից և հանցագործների տվյալ խմբի յուրահատկությունների հաշվառումից¹⁵. Հետևաբար, քրեաիրավական պրոբլեմների լուծումը պետք է ի նկատի ունենա պորտաբույծ կյանք վարողների իրավագիտակցութունը և բարոյագիտակցութունը: Պորտաբույծության դեմ պայքարի քրեաիրավական պրոբլեմների մշակման ժամանակ պետք է նկատի առնվեն նաև սովետական մարդկանց լայն զանգվածների իրավագիտակցութունը, ինչպես նաև այդ հակահասարակական երևույթի դեմ պայքարող պաշտոնական անձանց մասնագիտական իրավագիտակցության յուրահատուկ գծերը: Չափազանց կարևոր է նաև առանձին քաղաքացիների իրավագիտակցության մեջ եղած հնի մնացուկների հաշվառումը, լիսսելով արդեն միկրոմիջավայրում տեղ գտած հնարավոր բացասական գործոնների մասին:

ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1970 թ. փետրվարի 23-ի «Հակահասարակական պորտաբույծ կյանք վարողների դեմ պայքարն ուժեղացնելու միջոցառումների մասին» որոշման մեջ նշվում էր, որ «Նրանց դեմ լիովին չեն օգտագործվում հանրային ներգործության միջոցները, ըստ քաղաքացիների բնակության վայրի, հասարակայնության և աշխատավորների կոլեկտիվների ազդեցությունը: Պորտաբույծության դրսևորումների շուրջ չի ստեղծվում անհանդուրժողականության և համընդհանուր դատապարտման մթնոլորտ»¹⁶:

Որոշ դեպքերում պորտաբույծ կյանք վարողները, կատարելով բարոյական և իրավական նորմերի խախտում, օգտվում են առանձին քաղաքացիների «հովանավորությունից»: Այդ հանգամանքն անպայման նկատի է առնվում զանազան պրոֆիլակտիկ միջոցառումներ իրականացնելիս: Միևնույն ժամանակ, պորտաբույծ կյանք վարելուն նպաստող արարքների հականերգործություն կարող է պարունակել նաև հենց քրեական օրենքը: Սակայն փաստերը ցույց են տալիս, որ բարոյականության և իրավագիտակցության բնագավառում տեղ գտած բացասական երևույթները թուլացնում են քրեաիրավական նորմերի արդյունավետությունը պորտաբույծության դեմ մղվող պայքարում, և գա պետք է հաշվի առնել դրանց կիրառման ու կատարելագործման հարցերը քննելիս: Այսպիսով, պորտաբույծության դեմ մղվող պայքարում անհրաժեշտ է իրավական, վարչական և հասարակական միջոցների միասնություն:

¹⁴ А. Б. Сахаров, О концепции причин преступности в социалистическом обществе («Советское государство и право», 1976, № 9, стр. 28).

¹⁵ «Личность преступника», М., 1975, стр. 52.

¹⁶ СП СССР, 1970, № 4, стр. 26.

ПАЗАРИТИЧЕСКИЙ ОБРАЗ ЖИЗНИ КАК ОБЪЕКТ УГОЛОВНОПРАВОВОГО ЗАПРЕТА

ГРАНТ АХВЕРДЯН

Резюме

В юридической литературе работы о преступлениях, являющихся проявлением паразитизма, посвящены либо обзору законодательства, либо отдельным составам ведения паразитического образа жизни (бродяжничество, тунеядство и др.). На сегодняшний день, по существу, отсутствует общая характеристика составов этой группы преступлений, что является пробелом в советском уголовном праве.

Для констатации уголовно наказуемого паразитизма необходимо дать правовую квалификацию части образующих его поступков. Поэтому сама возможность уголовноправового регулирования борьбы с паразитическим образом жизни определяется предварительной правовой регламентированностью целого ряда поступков, хотя ответственность за их совершение может и не иметь предрешающего (преюдициального) значения.